

հեղինակի «Սօս և Վարդիթեր», «Առուածաղիկ» և «Հացի խնդիր» վէպերի շարքում անգամ աչքի է ընկնում իւր մի քանի առաւելութիւններով. «Յեցերի» մէջ ամբողջութեանը վնասող աւելորդ կտորներ շատ քիչ

կան, և դուրս բերած մի քանի կենդանի տիպերը պէտք է համարել մեր դրականութեան համար ձեռք բերած դրական հարստութիւն:

Լ. Ս.

ՍԱՀԱԿԵԱՆՑ ՍԱՀԱԿ քահանայ.— 1) ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ, ուղեցոյց հայ կրօնուսույցների համար. Հին-Ուխտի նիւթի մշակութիւնը. հատոր Ա. Թիֆլիս, տպար. Ռոտինեանցի, 1888 թ., 4-ծալ, VI+484 էր., տառ № 12. զինը՝ 1 ր. 75 կ. 2) ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ Հին-Ուխտի, աշակերտաց և աշակերտուհեաց համար. հատոր Ա. Թիֆլիս, 1888 թ. տպ. Մարտիրոսեանցի, 4-ծալ, 182 էր., տառ № 12, զինը՝ 30 կ. 3) ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ Նոր-Ուխտի. հատոր Բ. Թիֆլ. տպ. Մարտիրոսեանցի, 4-ծալ, 118 էր., տառ № 12, զինը՝ 35 կ. 4) Մի քանի խօսք Հայ կրօնուսույցներին, Թիֆլիս, տպ. Ռոտին., 1888. փոքր 4-ծալ. 23 էրես, տառ № 10, զինը 10 կոպէկ:

Այս չորս գրքերից առաջինը Հին-Ուխտի պատմական նիւթի մշակութիւնն է ըստ հերբարտցիլլերական շկօլպի 5 աստիճանների, իսկ հետևեալ գրքերը Հին և Նոր Ուխտի պատմութիւնից ընտրովի գլուխներ են, ինչպէս աշխատասիրող հայրն ասում է. «Մեր ցանկացած կրօնական-բարոյական իմաստները սաներին հաղորդելու համար, քաղածօրէն ընտրեցինք այս նիւթերը՝ ըստ կարելովն պահպանելով բնագրի ոճը»:

Նախ քան Ուղեցոյցի մասին խօսելը, որ իւր տեսակով բոլորովին նոր երևութ է մեր մանկավարժական գրականութեան մէջ, մի ակնարկ ձգենք «Սրբազան Պատմութիւն» Հին

և Նոր Ուխտի ձեռնարկների վերայ, որոնք կազմած են աշակերտների համար: Այս վերջին գրքերի բովանդակութիւնն է իսկապէս, որի շուրջը պտուղ է գալիս Ուղեցոյցը:

Ինչպէս աշխատասիրողի «Աղդ»-ից երևում է, նորա կարծիքով «աշակերտաց ձեռքը Սրբազան Պատմութեան մի առանձին դասագիրք տալն աւելորդ է, ամենաընտիր և նպատակարար դասագիրքը հէնց Սուրբ Գիրքը՝ բնագիրն է»: Նա այնու ամենայնիւ այս դասագրքերն առաջարկում է ի նկատի ունենալով դիւրըմբռնելի և արժանազին բնագրերի պակասութիւնը մեղանում: Այդ ուղիղ է, բայց և այնպէս՝ եթէ մենք պատրաստած ունենայինք այս մեթօդին

խասութեամբ հետևող հմուտ կրօնուսուցիչներ, այն ժամանակ և այս դասադրքերն աւելորդ կը լինէին. որովհետև, ինչպէս Վալտերի է, նոր Նիւթի իւրացուցումը և սերտողութիւնը իսկապէս պէտք է դասատան մէջ ուսուցչի օժանդակութեամբ լինին: Ի հարկէ, նախելով ուսումնարանի և դասարանի դարգացմանը՝ ուսուցչից պատմում, կարգում կամ աշակերտների մտաւոր շրջանի միջոցով և իւր օժանդակութեամբ կազմում է Նիւթը: Այս եղանակների մասին Վալտեր, երբ մենք քննութեան կ'առնենք Ուղեցոյցը: Առաջինը ընդունելի պէտք է համարել այս աշակերտական ձեռնարկները, մինչև որ մենք կ'ունենանք այնպիսի կրօնուսուցիչներ, որոնք ինչպէս ցարդ լինում է, միայն ձեռն համար չեն պատմում նոր դասը, այլ պատմելուց Վալտեր ան միջապէս չեա եւ հարցնում և այնպիսով աշակերտների միտքը միշտ լարած դրութեան մէջ պահում: Ապա թէ ոչ՝ աշակերտները միայն լսում են (?), այն դիտաւորութեամբ, որ իսկապէս տանը պէտք է սերտեն կամ, աւելի լաւ է ասել, բերան անեն դասագիրքը: Մենք, խորը քննելով աշակերտի հոգեկան տրամադրութիւնը այդ դէպքում, մինչև անգամ ուսուցչի այդ պատմելն էլ աւելորդ կը համարէինք. աւելի քիչ ժամակորոյս կը լինէինք, եթէ ասէինք՝ «այստեղից այստեղ պատրաստեցէք. բաց գրքերդ բացէք տեսնեմ. բոլորը հասկանում էք»: Եւ այսպէս անողներ էլ կան: Բանը նրանում է, որ ով անտեղեակ է պահանջած մեթոդին և

գործնականապէս հմուտ չէ դրանում՝ նորանից չի կարելի սպասել, որ նոր դասը դասարանում իւրացնել տալ և՛ անցնի նախադժած ծրագիրը: Ուրեմն այստեղ ժամանակի խընդիր է, որ պէտք է չը վրիպի կրօնուսուցիչ և այլ դասատուի աչքից: Դասադրքի կարևորութիւնը մեր ներկայ հանգամանքների մէջ ընդունելով՝ դառնանք Նիւթի ընտրութեան և նորա ոճին: Ով կարդացել է մանկական հոգուն համակերպած այս պատմութիւնները, նա կարող է, առանց դժուարութեան, մէկիկ-մէկիկ դուրս բերել նորա արժանաւորութիւնները նմանօրինակ դասադրքերի առաջ:

Նախ՝ պէտք է ըմբռնել մեթոդի ոգին և ապա ձեռք առնել «կրօնուսուցիչ Ուղեցոյցը»: միայն այդ դէպքում կ'ունենան ընթերցողի համար նշանակութիւն և իմ հետևեալ կարծիքները այդ տեսականի գործադրութեան վերաբերութեամբ: Մի անգամ կրօնուսուցիչի մանկավարժական հպեացքը ինքնուրոյն ընթացք ստանալով՝ նորա մէջ ևս կը ծագեն կատարելագործութեան նորանոր մտքեր, որոնց գործադրութիւնը մեր ուսուցչական գործունէութեան ամենագրաւիչ կողմն է:

Առաջարկած ինդրի ուսումնասիրութիւնը վերալիշեալ ուղղութեամբ լառաջ տանելով՝ հարկ պէտք է չը դրանք իւրաքանչիւր Վալտեր կարծիքին «Ուղեցոյցից» օրինակներ բերել, այլ ձևական աստիճանների մասին ընդհանրապէս նկատողութիւն անելիս՝ ես օրինակ կը բերեմ այս

Նպամ արն նիւթի կամ միութեան մշակումը:

Նպատակը, որ վերլուծութեան կամ 1 աստիճանի սկիզբն է դնում, պէտք է արնպիսի ատկութիւն ունենայ, որ դասարանի միտքը գրաւէ և լարէ ղէպի արն մտապատկերները շրջանները, որ աւանդելի պատմութիւնն է պարունակում: Նպատակի գլխաւոր ատկութիւնները են՝ հակիրճ և գրաւիչ լինելը: Ընդհանրապէս ասելով դրած նպատակները համապատասխան են թէօրիակի պահանջներին (տ. § 18, 26, 39 և այլն). շատ շատերը հէնց սկզբից ու վերջերից, բայց կան և անտեղի ձգձգած (որ շատ վնասում է մտապատկերների լարմանը) կամ շատ ցամաք նպատակներ (տ. § 23, 17 և նմանները): Առանձին արժանաւորութիւն ունին արն բազմաթիւ նպատակները, որոնք աշակերտների ինքնուրոյն մտածողութեամբ են գտնւում, և արն պէտք է անել, որքան որ հնարաւորութիւն լինի, որովհետև արն մեթոդով մենք աշակերտների մէջ կը զարգացնենք պատմական եղելութիւնների պարզ մատիկական ուղղութեամբ պատմելը, այսինքն՝ պատճառներից հետևանքներ եղրական ցենելու և նրանց գործադրելու ինքնուրոյն ոգին: Սկզբներում նպատակները լիակատար են դրած, ապա կրճատած. ի հարկէ, պէտք է միշտ աւելացնել՝ «մենք պէտք է տեսնենք, լսենք, տեղեկանանք, կարդանք և այլն, թէ՛ այս ու արն ինչ բանը ինչպէս պատահեց»:

1. Վերլուծութիւնները

մեծ մասամբ շատ խնամքով են մշակւած. նրանք աշակերտների մէջ արնպիսի մտապատկերներ ու սրանց կարակից զգացումներ են վերարտադրում, որոնք լիովին պատրաստակամ են լինում նոր աւանդելին իւրացուցանելու (տ. § 26 բ. հ. եր. 166, § 38, 39 և այլն): Այս կատարելութիւնը շատ անգամ չափազանցութեան է հասնում, բանը ծանրանում է, մինչև անգամ 2 աստիճանի սահմաններն է մտնում և նորը տեղ-տեղ արդէն աւանդում (տ. § 7, 8, 18, 26 և այլն): Երբ նորը արնպէս դիւրաւ գուշակելի է լինում, արն ժամանակ պէտք է վերլուծութիւնն ու լանդիմանարարութիւնը (նորը) խառնել: Այս ղէպքում ուսուցիչը միայն հարցեր է տալիս, իսկ դասարանը մակարեւորում: Ուսուցիչը միայն արն է լրացնում, ինչ որ դասարանին աւելարելի է նախատեսել: Աշակերտների ինքնուրոյն աշխատութեամբ նորի կազմելու արն մեթոդը գերմաներէն *darstellend* է անւանւում, որն իսկապէս աջող է արտապատում արն մեթոդի իմաստը: Այս մեթոդը արն առանձին կարեւորութիւն է ստացել Հերբարտի շօլալում, որովհետև նա մեծ աւանդութիւններ ունի լանդիմանարարութեան արն եղանակների առաջ, իբրև ինքնուրոյնութիւն զարգացնող ուղղութիւն, ինքնուրոյնութիւն, որ թէ՛ կրօնական-բարոյական գործաւնութիւնների և թէ՛ արն բոլոր գործերի մէջ ամենագլխաւոր բանն է:

2. Յանդիմանարարութեան աստիճանի մի մասի, այսինքն՝ հում

Նիւթի մատակարարութեան մասին եւ արդէն խօսել եմ, երբ առաջ եկաւ աշակերտական դասագրքերի հարցը: Հում Նիւթի դասաւորութեան վերաբերութեամբ ես համակարծիք եմ «Schuljahr» III հետեւալ մտքերին, ի հարկէ դատելով ընդհանուր մանկավարժական տեսակէտից և ի նկատի չ'ունենալով այս կամ այն ուսումնարանի Նախագծած ծրագիրը: Այդ հեղինակաւոր գիրքն ասում է. «Եւ մինչդեռ մենք սանին պատրիարքների պատմութեանը ծանօթացնում ենք, մենք կամենում ենք, որ նա սովորի ընկերական հեղինակութեանը լրակատար և մաքուր մանկական հնազանդութեամբ խոնարհել, ինչպէս և ապագալում՝ հիմունքների գիտակցութեամբ: Սորանով ենթադրւում է, որ ընկերական հեղինակութիւնը նորան երևալ ամենահասարակ ընկերավարական (social) չարաբերութիւններով և իրան այնպէս ցոյց տալ, որ այս չարաբերութիւնները բոլոր ապագալ չարաբերութիւնների համար օրինակելի լինել կարողանան»:

«Որ Ստեղծագործութեան և նորահետեւալ պատմութիւններն այս խընդիրը չեն կարող լուծել, հարկ չենք համարում բացատրելու: Բացի սրանից այս Նիւթերն իրանց կրօնականփիլիսոփայական հիմունքներով մեր աստիճանի համար շատ դժւար են, Պէտք է միայն մտածել Պատուիրազանցութեան և Աշտարակաշինութեան մասին! Թէև կարելի է այս պատմութիւններն և մյս աստիճանում աւանդել, բայց անկասկած ի մեծ վնաս նրանց ներքին խորին բու-

վանդակութեանը: Ցանկալի է այնուամենայնիւ, որ, ինչպէս շատ բանում, նոյնպէս և այստեղ՝ հեռու մնալին կրօնական Նիւթերի և իղէաների անժամանակալ դասաւանդութիւնից (Verfruehung) և սրանց մի այնպիսի ժամանակի վերապահէին, երբ մանուկների մտքերի աւելի հարուստ պաշարը և ոգեկան աւելի հասունութիւնը դասաւանդութեան ճշմարիտ հետեւանքի խորին հասկացողութեան համար գրաւական լինել կարողանալին (1): Մենք ուրեմն ստորին աստիճաններում չենք աւանդում նախնական պատմութիւնները և սկսում ենք Սրբազան Պատմութիւնը Աբրահամից. երբ մենք այս սկզբունքով ենք զեկավարում, սանին պէտք է միայն այնպիսի պատմութիւններ անել, որոնք հոգեբանօրէն նորան մօտ են»:

Ես դիմամբ այսքանս մէջ բերի, որպէս զի գոնէ այսուհետև ծրագիր և դասագիրք կազմողների աչքից չը վրիպի այս շատ կարևոր քննական հպեցակէտը:

Կրկին դառնալով մեթօդին՝ պէտք է և այստեղ վիշել, ինչ որ խօսեցի վերը darstellend եղանակի գործադրութեան մասին, որ օրինակ՝ § 8-ում շատ չարմար էր, նոյնպէս § 26, եր. 166 և նոյն § 26 երկրորդ հատուածում նմանները առաջից ու վերջից: Առհասարակ լանդիմանարարութեան օրինակների մեծամասնութիւնը լաւ տպաւորութիւն է գործում (տ. § 23, 17, 18: Ա. խառն, իսկ բ. աջող, § 26 II ա. նոյն § 26-ի երկ. հատուածում՝ աջող. II դ., § 38, 39, II բ. § 70 և այլն): Բացի վե-

րուիշեալներինց աջողած են և հետեհալներն, օրինակ՝ § 18 II ա. § 39, II ա. և նմանները: Այս աստիճանում մի պահասութիւն ևս աչքի է ընկնում. այդ ալն է, որ «նիւթի մէջ խորասուզւիլը» (Sachliche Vertiefung) և կրօնական-բարոյական նոյն գործառնութիւնը (պրօցեսսը) միշտ միմեանցից խստութեամբ զանազանւած չեն, որ կարդացածներին մէջ սակաւն սակաւ աչքի էր ընկնում:

Այս աստիճանի ամենագնահատելի արժանաւորութիւններից մէկն է քաղաքակրթական—պատմական (կուլտուր-հիստորիկական) և աշխարհագրական նկարագրութիւններն ու տեղեկութիւնները, որոնց քիչ չեն նպաստում բաւականին աջողած պատկերներն ու քարտէզները: Այս կողմից, որքան ևս զիտեմ, մեր նման-օրինակ դասագրքերը զուրկ են, ուստի և պատմութիւնը հէքիաթի բնաւորութիւն է ստանում, երբ ժամանակներն էլ մանաւանդ չեն լիչում:

3. Զ ու գ ո ղ ու թ ե ա ն մ չ ա կ ու մ ը ն ո ղ ն պ է ս ը ն դ հ ա ն ը ա պ է ս ա ջ ո ղ ա ժ է, (օրինակ § 17, 18, 38, 39 III ա.), իսկ խառն են, օրինակ՝ § 7 III բ., ուր 2 աստիճանի դատողութիւններ են (Vertiefung), § 38-ում 1 և 2 աստիճաններ, § 26. երգ. հատ. III. խառն, ուստի և ճապող, § 39 III. Բ. պարունակում է 5 աստիճանի հարցեր և ալն: Այս աստիճանը, որի գործն է թանձր բաղմակողմանի նիւթերից վերացուցման միջոցով զուտ գաղափարներ կաղմել՝ պէտք է աշխատի, որքան հնարաւոր է, խուսափել մանրամասնութիւններից:

Գ ո ղ ա ս ա ն ք ի արժանի է աշխա-

տասիրողի ձգտումը՝ այս համեմատութիւնների ժամանակ հակակալան պատմական կեանքի երեւոյթներից էլ օգուտ քաղելը (տ. § 39, 43, III ա. § 50 և ալն), որ սակաւն որքան շատ լինէր, ալնքան լաւ:

Հ ա մ ա կ ա ղ ու թ իւ ճ ը ը ն տրութեան համար հարուստ նիւթ ունի, որ զանազան տեսակ պէտք է կատարել: Այս աստիճանի չատկանիշն է մի երկու խօսքով՝ վկայութեամբ, ասացածքով և ալն արտապտել դասի գաղափարը, Յթէ աշակերտի ձեռքը դասագիրք տրած չը լինէր, պէտք էր ևս առաւել համառօտ վկայութիւններ բերել, որ աշակերտները պէտք է իրանց տեսրակների մէջ գրէին:

Այս աստիճանում ալնքան աչքի չեն ընկնում հակական կրօնական գրականութիւնից մէջ բերած օրինակները. իմ կարդացածների մէջ՝ միայն 245 Նրմ. ժամագրքից:

Գործադրութեան աստիճաններն ևս շատ լաւ օրինակներ ունին: Այստեղ աւելի կարեւոր էին հալ աշակերտների կեանքի դէպքերը մէջ բերել կամ երևակայական չարաբերութիւններ ներկայացնելով՝ աշակերտի դատողութիւնը լաւ: Վերջինս չը կալ Բալց որ ամենագլխաւորն է, եթէ դասաւանդութիւնը կանոնաւոր ընթացք է ունեցել, աշակերտները պէտք է գործնական կեանքի նման-օրինակ դէպքերում ղեկավարւէին Սրբազան Պատմութիւններից ստացած սկզբունքներով և ամեն անգամ իրանց հարց ու փորձ անէին. «Արդեօք այսպէս որ անեմ,

համապատասխան կը լինի այն ժամանակ սովորած սկզբունքին»։ Եւ այս պէտք է լինի կրօնուսուցման և ամբողջ կրթական ուսումնարանի կէտն պատահել։

Իրքի վերջը համախմբած են ժամանակագրական, աշխարհագրական, կուլտուրական-պատմական նութիւնն ու բարոյական կրօնական իմաստները։ Որպէս զի ուսուցիչը կարողանար հարկ եղած ժամանակ օգուտ քաղել աշխարհագրական ու կուլտուր-պատմական տեղեկութիւններից (3 և 5 աստիճանների համար), աւելի լաւ կը լինէր այստեղ մասնաւորապէս գրել և ոչ թէ միայն անունները առլ. իսկ ինչ վերաբերում է բարոյական-կրօնական իմաստներին՝ որոնք պէտք է արդէն ոչ թէ ժամանակակից, այլ գաղափարական տեսակետից համախմբէին և նման իմաստներից մի քանի հիմնական (կարդինալ) սկզբունքներ ընտրէին իբրև ղեկավարելի ներկայացուցիչներ։

Կրօնուսուցը պէտք է առանց կարդալու չը թողնէ և «Մի քանի խօսք հազ կրօնուսուցիչներին» տեսրակը, և ոչ միայն աղքատն. նա պէտք է խոր մտածէ նորա սրտաբուլխարտակալութիւնների մասին կրօնի և դասաւորութեան վերաբերմամբ։

Ես կարծում եմ, որ այնու ամենայնիւ մի բան ևս պակաս է այս աշխատութիւնների լաւագոյն արդիւնաւորելուն։ Ուսուցիչների համար կազմած դասագրքում պէտք էր կրօնի հինգ աստիճանների գործադրութեան վերաբերմամբ ուղեցուց նկատողութիւններ տար, որովհետև ես ևս,

օրինակ՝ որ արդէն ծանօթ եմ աղքատներին և պարագլուխ եմ աղքատներին, շատ անգամ չէի կարող տեսնել, աշակերտն է խօսողը, թէ ուսուցիչը։ Ինչպէս ինչ հնչող էր, ի հարկէ, ճշմարտութեանը հասնելը, բայց ով նոր է սկսում՝ նորա համար դժուար է։

Վերջացնում եմ ասելիքս, որ սակայն շատ երկարեցաւ։ Ինչ արած, թէ և խմբագրութեան կողմից ինչպանձնարարած էր «Մուրճ»-ի սովորական հակիրճ եղանակով քննել, բայց տեսալ, որ խնդրի կարևորութիւնը և բաղմակողմանիութիւնն անհնարին արին իմ մտքերը մասշտաբի տակ դնելը։

Ահա և այս ուսումնարանական տարին վերջանում է, քննութիւններն սկսուել են, ուսումնարաններն հաշիւ են տեսնում իրանց սաների մտաւոր և բարոյական կեանքի առաջադիմութեան։ Թո՛ղ այս մեթօդով ոգևորւած մարդիկ իրանց պաշտօնակիցների մէջ տարածեն նորա գաղափարները, օրինակելի դասերով և այլ միջոցներով ուսումնարանական կեանքը մտցնեն և այս նոր ուղղութիւնը, և այն ժամանակ պէտք է լուսալ, որ նորատեսակ և ողակաճ գործադրութեամբ այլ արդիւնքների կարելի է գալ։ Սկիզբը, ճշմարիտ է, դժուար է աջողում, բայց վերջը շատ գրաւիչ է։

Մենք տեղեկանում ենք, որ արժանապատիւ հայր աշխատասիրողի արդէն պատրաստել է և՛ «Նոր Ուխտի» «Ուղեցուցը»։ Տալ Աստուած, որ նորան օժանդակ լինին ձեռնհաս ընկերութիւններ կամ անձնաւորութիւններ, մանաւանդ այս մեղ համար շատ կարևոր կրօնուսուցման վերա-

Նորոգիչ գործին (վերանորոգման | առաջին վարդապետի, Գրիստոսի, քրիստոնէական վարդապետութեան | մեթօդի). Թ. Տ.-Մ.

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

1. BARCHUDARIAN, D-ր IOHANNES. Inwiefern ist Leibnitz in den Psychologie ein Vorgaenger Herbarts. Ein Beitrag zur Geschichte der Psychologie. Iena, Frommannsche Buchdruckerei (Hermann Pohle), 1889. (Բարխուդարեան, Դօքտօր Յովհաննէս՝ Որքանով Լէյբնիցը Հոգեբանութեան մէջ Հերբարտի Նախորդն է. Մի նպաստ հոգեբանութեան պատմութեան. Ենա, 1889.
2. ԲԱՅԱԶԷԴՅԻ՝ «ԹԱՍԻԲ». Տաճկա-հայ պատանիների կեանքից. Տպար. վարդանեանցի, Թիֆլիս, 1889. գինը 20 կոպ.
3. ՄԵԼԻԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ ԿՈՍՏԱՆԴԻՆ՝ «ՈՒՂԵՑՈՅՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ». Թիֆլիս. տպ. վարդանեանի. 1885. գինը՝ 60 կոպէկ.
4. Նոյն հեղինակ՝ «ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ—ԱՆՄՇԱԿ և ՄՇԱԿԻԱԾ ԾԱՌԻ ԿԵԱՆՔԻԸ». (սկզբունք ազգագործութեան, Հրատարակութիւն «Աղբիւր»-ի, Թիֆլիս. տպ. Մարտիրոս. 1885. գինն է 30 կոպէկ.
5. Նոյն հեղինակ՝ «ՇՕՇՎԱՅ ՂԱԼԻՆ ԽԷՐՆ ՈՒ ՇԱՌԸ». Կիրեց ՏԸՄԲ-ԼԱԶԻ ԽԱԶԱՆ. Թիֆլիս. տպ. վարդանեանցի. 1887. գինը՝ 45 կոպէկ պատկերով, 35 կոպ. առանց պատկերի.
6. Նոյն հեղինակ՝ «ԾԽԱԽՈՏԸ ԵՒ ԻՒՐ ՎՆԱՍՆԵՐԸ». Շուշի. տպար. Հայոց Հոգ. Տեսչութեան. 1888. գինը՝ 10 կոպէկ.
7. Նոյն հեղինակ՝ «ՓՇՐԱՆՔ». I. Շուշի, տպ. Հայոց Հոգ. Տեսչ. 1888, գինը՝ 15 կոպ.
8. Նոյն հեղինակ՝ «ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ». Շուշի, տպ. Հայոց Հոգ. Տեսչ. 1889. գինը 10 կոպէկ.
9. ՓԱՆԵԱՆՅ ԹՈՄՍԱ՝ «ՄԵԼԻՔ». Պատկերներ հայ գիւղական կեանքից. Թիֆլիս, տպ. վարդանեանցի, 1889 թ. գինը՝ 25 կոպ. Ծախում է լողուտ Ռաշտ քաղաքի Հայոց ծխական դպրոցի.
10. ԴԷ ԱՄԻԶԻՍ ԷԳՄԱՆԴՕ, Թարգմանութեամբ փիլիճոպոս ՎԱՐԴԱՆԵԱՆԻ՝ ՍԻՐՏ, աշակերտի փշատակարանը. Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1889 թ. գինը՝ 1 ռուբ.
11. Նոյն հեղինակ, նոյն թարգմանիչ՝ ԱՊԷՆԻՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՆԴԵՐԸ. Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1889 թ., գինը 20 կոպ.